

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Ծ Ր Ա Գ Ր Ի Մ Ա Ս Ն Ա Գ Ի Ր

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	<i>Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա 011301.00.7</i>
2. Բուհը	<i>Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ</i>
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	<i>մանկավարժության մագիստրոս</i>
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	<i>2024-2025 ուստարի</i>
6. Ուսումնառության լեզուն	<i>հայերեն</i>
7. Ուսուցման ձևը	<i>հեռակա</i>

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները.
<p>Հեռակա ուսուցման ձևով ԵՊՀ ԻՄ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:</p> <p>«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության մրցույթին հարցազրույցով՝ առանց ընդունելության քննության կարող են մասնակցել.</p> <ol style="list-style-type: none"> 1. ԵՊՀ ԻՄ-ի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք ուսումնական տարվա (տարին հաշվվում է՝ սկսած գործող ուսումնական տարվանից) կամայական մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի այն շրջանավարտները, ովքեր ստացել են մանկավարժի լրացուցիչ որակավորում և հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը, 2. ԵՊՀ ԻՄ-ի մյուս տարիների կամայական մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի այն շրջանավարտները, ովքեր ստացել են մանկավարժի որակավորում և

հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը,

3. այլ բուհերի «Նախադպրոցական մանկավարժություն», «Ընդհանուր մանկավարժություն» և «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությունների բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք տարվա շրջանավարտները, ովքեր հաղթահարել են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը,
4. դպրոցների այն ուսուցիչները, ովքեր ունեն առնվազն 5 տարվա մանկավարժական փորձ,
5. ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում գորացրված 3 կետում նշված մասնագիտությունների դիմորդները:

9. Ծրագրի նպատակները.

Ծրագրի նպատակն է.

- պատրաստել գիտամանկավարժական համակարգված գիտելիքների տեր որակյալ մանկավարժներ հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների համար,
- փոխանցել խոր և համակողմանի գիտելիքներ ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների և ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների և միջոցների ու ուսուցման արդյունքների գնահատման վերաբերյալ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա1.մեկնաբանելու արդի կրթության համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցման որակի առանցքային դրույթները,

Ա2.մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթության համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները,

Ա3.նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում,

Ա4.ներկայացնելու անձի սոցիալականացման օրինաչափությունները և արդյունավետ հաղորդակցման ձևերը,

Ա5.դասակարգելու ուսուցման մեթոդները և ընտրելու ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

Ա6.վերհանելու կրթության սուբյեկտների կրթական պահանջմունքները և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները,

Ա7. կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1.կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,

Բ2.կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում,

Բ3.կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում,

Բ4. կանխատեսելու ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու

թերությունները,

Բ5. կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ,

Բ6. ապահովելու հետադարձ կապը:

գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:

Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:

Կցված է

11. Օրագրի ուսումնական պլանը

13. Գնահատման ձևերը

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

- Հետազոտական աշխատանք
- Շնորհանդեսներ
- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Ձեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Ստուգարքներ
- Քննություններ
- Մագիստրոսական թեզի պաշտպանություն:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

1. միջին մասնագիտական կրթության հաստատություններում՝ որպես դասախոս,
2. հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ որպես ուսուցիչ,
3. արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչ,
4. տեղական ինքնակառավարման մարմինների կրթության բաժիններում,
5. աշխատանք տեղեկատվական գործակալություններում,
6. հրատարակչություններում և խմբագրություններում,
7. գովազդային գործակալություններում,
8. պետական և մասնավոր ձեռնարկություններում և գրասենյակներում

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ

- տպագիր նյութեր,
- էլեկտրոնային ռեսուրսներ,
- համացանցային կայքեր:

Ուսումնառության օժանդակության ձևեր

- պասիվ, ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ,
- տեսողական (շտրհանդեսային) և տեսալսողական միջոցներ

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (հաստատված ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N714-ն որոշմամբ)
- Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (հաստատված 2016 թ. -ին ԵՊՀ գիտական խորհրդում),
- ԵՊՀ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

18. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

Հետազոտական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդները:

Հաղորդակցման

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցեսը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,

- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

SZS կիրառություն

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու Moodle հարթակը դասապրոցեսը իրականացնելու համար:

2. Մասնագիտական կարողություններ

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական աստիճան

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն/ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար / :
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:

Մանկավարժական փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

<i>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</i>		<i>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</i>	
Ա1.	Մեկնաբանելու արդի կրթության համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցման որակի առանցքային դրույթները:	Բ1.	Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:
Ա2.	Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթության համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:	Բ2.	Կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում:
Ա3.	Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:	Բ3.	Կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում:
Ա4.	Ներկայացնելու անձի սոցիալականացման օրինաչափությունները և հաղորդակցման ձևերը:	Բ4.	կանխատեսելու ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները,
Ա5.	Դասակարգելու ուսուցման մեթոդները և ընտրելու ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,	Բ5.	Կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ:
Ա6.	Վերհանելու կրթության սուբյեկտների կրթական	Բ6.	Ապահովելու հետադարձ կապը:

	պահանջմունքները և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:		
Ա7.	Կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1.	Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:	Գ5.	բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:
Գ2.	Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:	Գ6.	ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:
Գ3.	վարժ կիրառելու առաջադեմ ՏՀՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:	Գ7.	ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:

<p>Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:</p>	<p>Գ8 նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքներ																				
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8
ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում	0104/Մ 01												+	+			+	+				
Մասնագիտական օտար լեզու	0305/ Մ 02														+	+	+	+	+	+	+	
Ձեռնարկատիրություն	0201/Մ01								+						+	+			+	+	+	+
Կարիերայի կառավարում	0201/Մ02								+						+	+	+					
Նախագծերի կառավարում և գնահատում	0303/ Մ 35		+						+				+			+	+	+	+			
Հետազոտության պլանավորում և մեթոդաբանություն	0303/ Մ 36		+						+				+		+		+	+		+		
Մասնագիտության արդի հիմնախնդիրները	0303/ Մ 08	+	+						+						+	+	+	+	+	+		
Ընդհանուր մանկավարժություն	0303/ Մ 10		+	+	+				+			+						+	+	+	+	+
Հոգեբանություն	0303/ Մ 11		+	+	+				+		+								+	+	+	+
Տարիքային մանկավարժություն	0303/ Մ 12		+	+	+				+		+				+	+						
Ուսուցման տեսություն	0303/ Մ 13	+	+						+	+		+				+	+	+	+			

Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ	0303/ Մ 14	+	+	+				+	+	+	+			+	+	+	+	+	+	+			
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 15							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 16							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Անգլերենի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 17							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 18							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 19							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 20							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Քիմիայի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 21							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 22							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 23							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Պատմության դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 24							+	+	+	+	+						+	+	+	+	+	+
Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 25							+	+	+	+	+						+	+	+	+	+	+

Կենսաբանության դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 26						+	+	+	+	+							+	+	+	+	+	+
Հայ եկեղեցու դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 27						+	+	+	+	+							+	+	+	+	+	+
Հասարակագիտության դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 28						+	+	+	+	+							+	+	+	+	+	+
ՆԶՊ-ի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 29						+	+	+	+	+							+	+	+	+	+	+
Ֆիզկուլտուրայի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 30						+	+	+	+	+							+	+	+	+	+	+
Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա	0303/ Մ 31																						
Գիտամանկավարժական պրակտիկա -1	0303/ Մ 32		+					+	+	+	+							+	+	+	+	+	+
Գիտամանկավարժական պրակտիկա -2	0303/ Մ 33		+					+	+	+	+							+	+	+	+	+	+
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	0303/ Մ 34		+							+				+				+		+	+	+	+

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ										Գնահատման ձևը							
		1		2		3		4		5		1		2		3		4		5				
		Ընդ.	Դիվ.	Գրծ.	սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	Կրդ.	Լս.ժ.	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ	6																							
Պարտադիր դասընթացներ	3	180	0	10	0	160	6	7	3	4														
SՏՏ-ները մասնագիտական ոլորտում	3	90	0	10	0	80	3	3.5															ստ.	
Կամընտրական դասընթացներ	3	90	5	5	0	80	3	2.5															Առ. ընթ. գն.	
Ձեռնատիրություն																								
Կարիերայի կառավարում																								
Նախագծերի կառավարում և գնահատում																								
Հետազոտության պլանավորում և մեթոդաբանություն																								
ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ	33	990	103			887	15	17	12	14	6	3.5												
Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3	90	0	10	0	80	3	3.5															Առ. ընթ. գն.	

Մասնագիտական օտար լեզու	6	180	10	10		160	6	7												Առ .ընթ. զն.
Հոգեբանություն	3	90	0	10	0	80					3	3.5								Առ .ընթ. զն.
Տարիքային մանկավարժություն	3	90	10	10	0	80					3	3.5								Առ .ընթ. զն.
Ընդհանուր մանկավարժություն	6	180	10	10	0	160	6	4												Առ .ընթ. զն.
Ուսուցման տեսության	3	90	10	6	0	80	3	3.5												Առ .ընթ. զն.
Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ	6	180	10	10	0	160			6	7										Առ .ընթ. զն.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	15	450				450					15	0								
Մասնագիտական պրակտիկա	3					90					4	0								Ստ.
Մագիստրոսական թեզ	12					360					12	0								Պատ.
ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	6	180	10	10	0	160			6	4										Առ ընթ. զն

Անգլերենի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Քիմիայի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Պատմության դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Ֆրանսերեն դասավանդման մեթոդիկա			10	10	160														
Կենսաբանության դասավանդման մեթոդիկա			10	10	160														

Հայ եկեղցու պատմության դասավանդման մեթոդիկա			10	10	160															
Հասարակագիտության դասավանդման մեթոդիկա			10	10	160															
ՆԶՊ դասավանդմամ մեթոդիկա			10	10	160															
Ֆիզկուլտուրայի դասավանդման մեթոդիկա			10	10	160															
Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա			10	10	160															
Ընդամենը	60	1800			1656	21	25	18	21	2 1	4									

Դասընթացների նկարագրիչներ

1.0104/Մ 01	2. S2S-ները մասնագիտական ոլորտում	3. 3 ECTS կրեդիտ
4.3.5Ժամ/շաբաթ	5.0/10/0	
6.1-ին կիսամյակ	7.ստուգաք	
<p>9.Դասընթացի նպատակն է ձևավորել պատկերացում տվյալների հենքերի և WEB - կայքերի մասին, սովորեցնել աշխատել տվյալների հենքերի հետ MS ACCESS համակարգի օգնությամբ, սովորեցնել աշխատել WEB-կայքերի հետ՝ հիպերտեքստերի նշադրման HTML լեզվի օգնությամբ:</p>		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> արժևորելու տվյալների հենքերի դերը մասնագիտական խնդիրներում, նախագծելու համացանցային կայքեր մասնագիտական առարկաներից, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> օգտագործելու ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում, ստեղծելու մասնագիտության վերաբերյալ տվյալների հենքեր և ղեկավարել դրանք, մշակելու և ստեղծելու մասնագիտական համացանցային կայքէջեր, համադրելու ուսուցման արդյունավետ կրթական տեխնոլոգիաները: <p><i>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> արդյունավետորեն պլանավորելու կրթական ռեսուրսները մասնագիտական գործունեության ընթացքում, օգտագործելու ստացած գիտելիքները պրակտիկայում: 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Բ5. Կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ:</p> <p>Բ6.Ապահովելու հետադարձ կապը (դասավանդող-ուսումնառող, ուսումնառող- դասավանդող):</p> <p>Գ3.Վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:</p> <p>Գ4. Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող</p>		

քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- գործնական առաջադրանքներ,
- նախագծային մեթոդ,
- համագործակցային,
- խմբային ուսուցում

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

Ստուգարքը անց է կացվում նախօրոք տրված առարկայական հարցաշարի հիման վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Տվյալների ղեկավարման համակարգեր: Դրանց հիմնական կիրառությունները: **Թեմա 2.** Տվյալների հենքեր, դասակարգումը: **Թեմա 3.** Տվյալների ղեկավարման Ms Access համակարգը և հիմնական գործառնությունը: **Թեմա 4.** Տվյալների, հարցումների կազմակերպումը և ղեկավարումը Ms Access համակարգում: **Թեմա 5.** Հիպերտեքստերի նշադրման HTML լեզու: **Թեմա 6.** Մասնագիտական կայքերի նախագծում HTML լեզվով: **Թեմա 7.** Կայքերի ոճավորում: **Թեմա 8.** Ձևաչափում:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Մանուկյան Ս. Գ., Տվյալների բազաների համակարգերի ներածություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2005:
2. К. Дейт, Введение в системы баз данных. 6-е изд., М., 2000.
3. Joan Lambert, Joyce Cox, Microsoft Access 2013 Step by Step. // Online Training Solutions, Inc., 2015.
4. Elizabeth Castro, Bruce Hyslop, HTML and CSS: Visual QuickStart Guide / Edition 8. // Peachpit Press, 2013.

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1.0303/Մ 31	2. Հետազոտության պլանավորում և մեթոդաբանություն	3.3 ECTS կրեդիտ
4. 3.5 ժամ/շաբ.	5.5/5/0	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել մանկավարժության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդաբանությանն ու մեթոդներին և սովորեցնել ինքնուրույն ուսումնասիրություններ կատարելու հնարները:

9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. վերարտադրելու գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդաբանությունը,
2. թվարկելու մանկավարժության ոլորտում հետազոտական աշխատանքներ կատարելու համար կիրառավոր մեթոդները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. օգտագործելու համագիտական և նեղ գիտական մեթոդներ մասնագիտական կիրառական վերլուծություններ և ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար,
2. մասնագիտորեն վերլուծելու և գնահատելու մանկավարժության ոլորտը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ,
2. աշխատելու թիմում:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա2. Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները,

Բ1. Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,

Բ5. Կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ,

Գ1. Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ3. Վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ6. Ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- խոսքային մեթոդներ,
- լսարանային ցուցադրություններ,
- գործնական մեթոդներ,
- պրոբլեմային-որոնողական մեթոդ,
- հետազոտական մեթոդ,
- բանավեճ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Մասնակցությունը՝ մինչև 3 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, ընթացիկ ստուգումը՝ 5 միավոր և եզրափակիչ բանավոր քննությունը՝ առավելագույնը 7 միավոր արժեքներով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** Մեթոդական հետազոտության պլանավորումը և աշխատանքի շրջանակները: **Թեմա 3.** Մեթոդական հետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը: **Թեմա 4.** Գիտական գրավոր խոսքի կառուցվածքի բաղադրիչները և դրանց ներկայացման բովանդակությունը: **Թեմա 5.** Գիտահետազոտական աշխատանքի արդյունքների ներկայացման ընդհանուր սկզբունքները: **Թեմա 6.** Գիտական աշխատանքը պաշտպանության ներկայացնելու ձևաչափը:

14. Հիմնական գրականության ցանկը

1. Ավագիմյան Ա., Գիտական գրավոր խոսք, Եր., 2021:
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2012:
3. Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները, Եր., 2014:

1.0303/Մ 32	2.Նախագծերի կառավարում և գնահատում	3.3 ECTS կրեդիտ
-------------	------------------------------------	-----------------

4. 2.5 ժամ/շաբ.	5.5/5/0
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են նախագծի ղեկավար աշխատելու և կրթության ոլորտի զարգացման ուղղված ծրագրեր մշակելու ու իրականացնելու համար:</p>	
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու և թվարկելու նախագծերի պլանավորման հիմնական սկզբունքերը, 2. սահմանելու նախագծի աշխատանքների կառուցվածքը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործելու համագիտական և նեղ գիտական մեթոդներ մասնագիտական կիրառական վերլուծություններ և ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար, 2. քարեզագրելու նախագծերի շահակիցներին <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ, 2. աշխատելու թիմում: 	
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա2.Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները,</p> <p>Բ1.Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,</p> <p>Բ5. Կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ,</p> <p>Գ2. Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,</p> <p>Գ3. Վարժ կիրառելու առաջադեմ ՏՀՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական</p>	

ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,

Գ4. Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. Բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- խոսքային մեթոդներ,
- լսարանային ցուցադրություններ,
- գործնական մեթոդներ,
- պրոբլեմային-որոնողական մեթոդ,
- հետազոտական մեթոդ,
- բանավեճ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Մասնակցությունը՝ մինչև 3 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, ընթացիկ ստուգումը՝ 5 միավոր և եզրափակիչ բանավոր քննությունը՝ առավելագույնը 7 միավոր արժեքներով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Նախագծի կառավարման հիմունքներ: **Թեմա 2.** Նախագծերի կառավարման փուլեր: **Թեմա 3.** Նախագծի կառուցվածքը: **Թեմա 4.** Նախագծի ղեկավարը և ղեկավարի դերը: **Թեմա 5.** Գործողությունների (միջոցառումների) բյուջետավորում: **Թեմա 6.** Նախագծի մոնիթորինգ և գնահատում, արդյունքային ցուցանիշների վերլուծության սկզբունքներ:

14. Հիմնական գրականության ցանկը

1. Meri Williams (2008), ‘The Principles of Project Management’
2. Управление проектами: фундаментальный курс (2013) , учебник / А. В. Алешин, В. М. Аньшин, К. А. Багратиони
3. Joseph Heagney (2011), ‘Fundamentals of Project Management’, 4th edition
4. Kirsi Hyttinen (2017), ‘Project Management Handbook’
5. Gary R. Heerkens, PMP (2002), ‘Project Management’
6. Adrienne Watt (2014), ‘Project Management’

1.0201/Մ 33	2.Ձեռնարկատիրություն	3.3 ECTS կրեդիտ
4. 3,5 ժամ/շաբ.	5.5/5/0	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ փոխանցել միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության ոլորտներում</p>		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերելու «բիզնես» և «ձեռնարկատիրություն» եզրույթները: 2. պլանավորելու և կանխատեսելու բիզնեսի ընթացքը <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու հաջող բիզնեսի ստեղծման մեթոդաբանությունը: <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ, 2. աշխատելու թիմում: 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1.Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,</p> <p>Գ1. Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,</p> <p>Գ2. Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,</p> <p>Գ5. Բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:</p> <p>Գ6. Ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և</p>		

<p>պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:</p> <p>Գ7. Ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:</p> <p>Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> • խոսքային մեթոդներ, • լսարանային ցուցադրություններ, • գործնական մեթոդներ, • պրոբլեմային-որոնողական մեթոդ, • հետազոտական մեթոդ, • բանավեճ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Մասնակցությունը՝ մինչև 3 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, ընթացիկ ստուգումը՝ 5 միավոր և եզրափակիչ բանավոր քննությունը՝ առավելագույնը 7 միավոր արժեքներով:</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Ձեռնարկատիրության և ներդրումների իրականացման տեսական և մեթոդաբանական հարցերը: Թեմա 2. Գործարարը որպես տնտեսական գործընթացի սուբյեկտ: Թեմա 3. Արտադրական գործունեության տնտեսական բովանդակությունը: Թեմա 4. Գործարարությունը որպես տնտեսական ակտիվության հատուկ ձև: Թեմա 5. Գործարարի անձնական հատկանիշները: Թեմա 6. Գործարար միջավայր: Թեմա 7. Գործարար միջավայրի վերլուծություն: Թեմա 8. Գործարարության տեսակները: Թեմա 9. Գործընկերային կապեր: Թեմա 10. Բիզնես պլանի կազմում:</p>		
<p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Մելքունյան Մ., Ձեռնարկատիրության և ներդրումներ, Երևան, 1998: 2. Սուվարյան Յու., Սուվարյան Ս., Գործարարության ծրագրի մշակման հիմունքները, Երևան, 1997: 3. Основы предпринимательской деятельности, Москва, 1997. 		

1.0201/Մ 34	2. Կարիերայի կառավարում	3.3 ECTS կրեդիտ
-------------	-------------------------	-----------------

4. 3.5 ժամ/շաբ.	5.5/5/0
6.1-ին կիսամյակ	7.առանց ընթացիկ քննությունների գնահատման
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ անհատական կարիերայի պլանավորման և զարգացման, ինչպես նաև ընկերության աշխատակիցների կարիերայի զարգացման կառավարման համար:</p>	
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնել կարիերայի զարգացման տեսական և մեթոդական հիմունքները, սահմանել անհատական կարիերայի զարգացման հիմնական օրինաչափությունները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> կիրառելու կարիերայի առաջխաղացման ինքնամոտիվացիայի հմտությունները, պլանավորելու կազմակերպության կարիերայի գործընթացները <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> պահպանելու մասնագիտական էթիկայի կանոնները: աշխատելու թիմում: 	
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1.Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,</p> <p>Գ1. Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:</p> <p>Գ2. Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:</p> <p>Գ3. Վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:</p>	
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p>	

- խոսքային մեթոդներ,
- լսարանային ցուցադրություններ,
- գործնական մեթոդներ,
- պրոբլեմային-որոնողական մեթոդ,
- հետազոտական մեթոդ,
- բանավեճ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Մասնակցությունը՝ մինչև 3 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, ընթացիկ ստուգումը՝ 5 միավոր և եզրափակիչ բանավոր քննությունը՝ առավելագույնը 7 միավոր արժեքներով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Կարիերայի զարգացման տեսական և մեթոդական հիմունքները: **Թեմա 2.**Անհատական կարիերայի զարգացման կառավարում: **Թեմա 3.**Կազմակերպությունում աշխատողների կարիերայի կառավարում: **Թեմա 4.** Կարիերայի հաջողության գործոնները և կարիերայի ներուժի գնահատումը: **Թեմա 5.** Միջկազմակերպչական և մասնագիտացված կարիերա: **Թեմա 6.** Ուղղահայաց և հորիզոնական կարիերա: **Թեմա 7.** Թեստավորումը՝ որպես կարիերայի «ախտորոշման» հիմնական միջոց:

14.Հիմնական գրականության ցանկը

1. Управление карьерой: учебное пособие. – М.: ИНФРА-М, 2015.
2. Управление персоналом: Учебник для вузов / Под ред. Т.Ю. Базарова, Б.Л. Еремина. – 2-е изд., перераб. и доп. – М.:ЮНИТИ, 2016.
3. Карташова Л.В. Управление человеческими ресурсами: Учебник. - М.: ИНФРА-М. - 2017. - 235 с. - (Учебники для программы MBA).
4. Резник, С.Д. Управление личной карьерой. Учебное пособие /С.Д. Резник, И.А. Игошина, В.С. Резник. – М.: Логос, 2015.
5. Шейл П. Руководство по развитию персонала. - СПб.: Питер, 2015.
6. Управление человеческими ресурсами организации: теория, процессы, технологии : монография / Е.В. Михалкина, В.А. Алешин, А.И. Зотова и др. ; под общ. ред. Е.В. Михалкина. - Ростов-н/Д :, 2015. - 426 с.

1. 0305/ Մ 02	2. Մասնագիտական օտար լեզու	3. 6 ECTS կրեդիտ
4. 7 ժամ/շաբաթ.	5. 10/10/0	
6.1-ին կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ կատարելագործել ուսանողների օտար լեզվով հաղորդակցական կարողությունները՝ ինչպես մասնագիտության, այնպես էլ հաղորդակցման այլ ոլորտներում, խորացնել մասնագիտական լեզվի բառապաշարի, քերականական և ոճաբանական, յուրահատկությունների վերաբերյալ գիտելիքները, ձևավորել գիտական բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելով մասնագիտական տեքստերի վերլուծության տարբեր մոտեցումները (որոնողական, ճանաչողական, մեկնաբանական)՝ ճիշտ ընկալելու դրանց բովանդակությունն ու կառուցվածքը, 2. տարրորոշելու մասնագիտական բառապաշարի բոլոր շերտերը՝ դրանց ճշգրիտ գործածության նպատակադրմամբ, 3. ցուցաբերելու մասնագիտության ոլորտում անգլերեն լեզվով ինքնուրույն աշխատանք կատարելու սկզբունքների իմացություն: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնելու մասնագիտական տեքստերի իմաստային, կառուցվածքային և ոճական վերլուծություն և թարգմանություն, 2. ներկայացնելու և մեկնաբանելու մասնագիտական տեսակետներ ու փաստարկներ, ձևակերպելու, շարադրելու, հիմնավորելու անձնական կարծիքը, քննարկելու, բանավիճելու մասնագիտական հարցերի արդի հիմնախնդիրների շուրջ, 3. գրելու և ներկայացնելու մասնագիտական թեմաներով էսսեներ/ զեկույցներ, ռեֆերատներ, գիտաժողովի թեզիսներ՝ տրամաբանորեն և հստակ կառուցելով շարադրանքը, 4. լսելով ընկալելու և վերարտադրելու մասնագիտությանն առնչվող դասախոսությունների, հարցազրույցների ձայնագրություններ և տեսագրություններ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. արդյունավետ օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից (ներառյալ ինտերնետային) տեղեկատվություն քաղելու, քննադատաբար վերլուծելու և ներկայացնելու նպատակով: 		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ1. Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ2. Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:

Գ3. Վարժ կիրառելու առաջադեմ SZS-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. Բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

Գ6. Ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

Գ7. Ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջումները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- գործնական պարապմունք,
- անհատական և խմբային աշխատանք,
- անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
- ինքնուրույն աշխատանք,
- բանավոր ներկայացում/ պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում),

<ul style="list-style-type: none"> • իրավիճակային խնդիրների քննարկում:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Մասնակցությունը՝ մինչև 3 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, ընթացիկ ստուգումը՝ 5 միավոր և եզրափակիչ բանավոր քննությունը՝ առավելագույնը 7 միավոր արժեքներով:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Օտար լեզվի բառապաշարային, քերականական և ոճաբանական յուրահատկությունները: Թեմա 2. Մասնագիտական տեքստերի գործառական նշանակությունը և դրանց իրացումը անգլերեն լեզվով գրավոր ու բանավոր հաղորդակցման գործընթացում: Թեմա 3. Ակադեմիական գրագրություն՝ գիտական հոդվածների ու աշխատությունների, գրախոսությունների և ամփոփումների, ինչպես նաև ռեֆերատների, զեկուցումների, էսսեների շարադրման ձևերն ու սկզբունքները: Թեմա 4. Մասնագիտական բնագիր տեքստերի, դասախոսությունների, ձայնագրությունների ունկնդրմամբ՝ դրանց բովանդակության վերծանման, վերարտադրության առանձնահատկությունները:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. English File, 4th edition, Intermediate , 2019 . 2. Gasparyan S., Knyazyan A. Academic English Yerevan 2002. 3. Teaching geography through English Cambridge University press , 2018. 4. D.Cotton, Language Leader ,Upper Intermediate, 2015.

1.0303/ Մ 08	2.Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3.3 ECTS կրեդիտ
4.3,5 ժամ/շաբաթ	5.10/0/0	
6. 1-ին կիսամյակ	7.առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են մանկավարժական գործունեության մեջ, մեկնաբանել կրթության համակարգերի զարգացման ուղիները, մեկնաբանել կրթական նոր հարացույցները, որոնք էականորեն փոխում են ուսուցման նպատակը, բովանդակությունը, կազմակերպման ձևերն ու մեթոդները, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները:</p>		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. մեկնաբանելու մանկավարժության մեջ առկա հիմնախնդիրները, 		

2. ներկայացնելու մանկավարժության սկզբունքների միջև եղած տրամաբանական կապը,
3. գիտակցելու ուսուցման մեթոդաբանությունը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու կրթական հարացույցների դերը,
2. մեկնաբանելու կրթության համակարգերի զարգացման տարբեր ուղիների արդյունավետությունը,
3. կիրառելու մանկավարժության սկզբունքների դրույթներն ուսուցման գործընթացում:
